

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ազգ. Վ. Պ. Կիւլպէնկեան

Մայրանցի

15 ՕԳՈՍՏՈՒ 1935 — 31 ԴԵԿԵMBER 1935

Հ. Ա. Լ. Ե. Պ.




614.2

Ա. 23

ՏՊ. «ԱՐԱՐԱ» ԽԱՆՏԵՐ, ՀԱԼԵՊ

614.2
U-23

10 JUL 2010



ՄԱՅՐԱՆՈՑԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿՈՂԱԾՆ ԴԻՏՈՒՄ (



63409-67

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱԶԳ. Վ. Պ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ
ՄԱՅՐԱՆՈՑԻ 4½ ԱՄՍՈՒԱՅ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ

Ազգ. Վ. Պ. Կիւլպենկեան Մայրանոցի պաշտօնական բացումը կատարուած էր 1935 Փետր. 7ին, իսկ հնամակալութիւնս պաշտօնի կանչուած էր Ապրիլի սկիզբները: Խնամակալութեանս՝ կանդամակցէին Տքթ. Պողոսեան, Տքթ. Հրեշտակեան Տքթ. Նաճարեան, ձօրճ Ֆէթթէլեան եւ Ն. Ֆըսթրգնեան: Օգոստ.ի սկիզբները Տքթ. Նաճարեան հրաժարած ըլլալով, անոր փոխանորդեց Տիար Պետրոս Մարանկօցեան:

Խնամակալութեանս անդրանիկ նիստը գումարուած է 1935 Ապրիլ 2 ին, Դիւանը կազմուեցաւ հետեւեալ կերպով, Տքթ. Պողոսեան Ատենապետ, Ն. Ֆըսթրգնեան Ատենապետ, ձ. Ֆէթթէլեան Գանձապահ: Մինչև ցարդ ունեցած ենք 33 նիստ, գրած ենք 68 նամակներ:

Մայրանոցը իր դռները բացաւ ժողովրդեան առջեւ Օգոստ. 15 էն սկսեալ, հետեւաբար ներկայ տեղեկագիրը կ'ամփոփէ Օգոստ. 15 էն մինչեւ Դեկտ. 31ի, այսինքն չորս ու կէս ամսուայ շրջան մը:

Խնամակալութիւնս, նկատելով որ Մայրանոցը նոր կը բացուի ու ժամանակի կը կարօտի որպէսզի ժողովրդը ընտելանայ անոր, ու փոխանակ տունը հակառողապահիկ ու շատ չանգամներ սենեակներու չգոյութեան պատճառաւ անպատշաճ պայմաններու ներքեւ ծննդաբերութիւն կատարելու, վարժուի Մայրանոցի առողջապահիկ մթնոլորտին վստահելու իր զաւակաց ծնունդը. նկատի Էառնելով այս պարագաները որոշեց փոխանակ պիւտնէով ենթադրեալ չպաշտօնէութեան ամբողջութիւնը պաշտօնի կանչելու, մաս առ մաս անհրաժեշտ պաշտօնէութիւնը միայն պաշտօնի հրաւիրելու ըստ պէտքին ապա շատցնել անոնց թիւը, նախագծուած պիւտնէի սահմանին մէջ: Այնպէս որ առաջինէանգամ պաշտօնի հրաւիրեցինք անհրաժեշտ պաշտօնէաները միայն, մանկաբարձուի մը, Օր. Ատրինէ հաշտութեան, վկայեալ ֆրանս. Փաքիւլթէէն, հիւանդապահուի մը, խոհարարուի, լուացարարուի ու

մաքրութեան հսկող մը, դոնապան մը եւ Առաջնորդարանին յանձնաբարութեամբ Օրիորդ մը, որ իբրև Տիրոջը ուստիեալ պաշտօնեայ, ցկեանս ծառայել կը խոստանար Մայրանոցի մէջ: Պաշտօնի հրաւիրեցինք նաեւ այցելու հաշուակալ մը: Գալով բժշկական սպասարկութեան, նկատելով որ անբնականոն ծնունդները % 5 կամ 6 հազիւ կը պատահին, համածայնութիւն մը կնքեցինք քաղաքիս ծանօթ մանկաբարձ բժիշկներէն Տօքթ. Էմին Անթաքիի հետ, որպէսզի անբնականոն (Systocie) պարագաներուն գալով անծամբ կատարէ ծննդաբերութիւնը: Միւս կողմէն նկատելով որ ամեն օր Մայրանոց այցելելով ծննդաբեր կանանց առողջական վիճակը բժշկական քննութեան ենթարկելու անհրաժեշտութիւնը կայ, այս պաշտօնին հրաւիրեցինք նախ Տօքթ. Գէորգ Արսլաննանը առժամեայ հանգամանքով եւ ապա Տօքթ. Գէորգ Տափուտարեանը մնայուն բժշկի հանգամանքով: Մինչեւ հիմա երեք ծնունդի համար բժշկական միջամտութեան հարկ եղաւ, որուն մէկը Տօքթ. Անթաքին կատարեց, իսկ երկուքը Հաստատութեանս մնայուն բժշկը Տօքթ. Տափուտարեան: Վիրաբուժական միջամտութեան պարագային. Տօքթ. Ալթունեան որդի խոստացած է կատարել գործողութիւնը:


Յղի կանայք, Մայրանոց այցելելով քննութեան կ'ենթարկուին հաստատութեանս մանկաբարձուհիին կողմէ, ի հարկին մնայուն բժշկին կողմէ, ծննդաբերութեանց պահուն երբ ենթական յօժարի մնայուն բժիշկն ալ ներկայ կ'ըլլայ ծննդաբերութեան։ Հաստատութեանս մէջ փօլիբլինիք մը հաստատած ենք հանրութեան համար, շաբաթը երկու անգամ, կանանց եւ ծծկեր մանուկներու հիւանդութիւնները դարմանելու։

Այս չորս ու կէս ամսուայ շրջանին մայրանոցի մէջ ընդունուած են 48 կիներ, որոնցմէ 43 հատը կատարած են ծննդաբերութիւն, չորսը արգանդի մաքրութիւն եւ մէկը զուրս ելած է զիրառոյժ բժշկի չգոյութեան պատճառաւ։

Ունեցած ենք 43 ծնունդ որոնցմէ 40ը բնականոն, մէկը բժշկական միջամտութիւնով, երկու հատը ժամանակէն առաջ, ծնունդներէն 38 հատը ողջ եւ առողջ, երկուքը մեռած ըլլալով ծնած են, իսկ երեքը ծնանելէ վերջ մեռած են։ Ծնածներուն 21ը մանչ եւ 22ը աղջիկ։

Հաստատութեան բժշկական քննութեան ենթարկուած են 11 նոյ.—մինչեւ 31 Դեկտ. 138 հոգի, ասոնցմէ 48ը յղի կիներ, մնացածը կանանց եւ մանուկներու հիւանդութիւններ։

ՇՆԴԱՆԴԱՐ ՍՐԱՀ



ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԱԶԳ. Վ.Պ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՅՐԱՆՈՑԻ
1935 ՕԳՈՍՏՈՍ 15 — 1936 ՅՈՒՆՎԱՐ 1

ՄՈՒՏՔ

Բարեբարներէ 125 անգլ. ոսկի	46750
Ծննդաբնութենէ	17670
Դարմանատունէ	895
Նուիրատուութենէ	3950
4½ ամսուայ պիւտհէի բայը	6471
	75736

Ինչպէս մեր չորս ու կէս ամսուայ հաշուեկուն կը տեսնուի, առ շրջանին մէջ հաստատութեանս ելքը եղած է 75736 սուր. զրշ. մօտաւորապէս ամսական 170 սուր. ոսկի: Այս ծախքը գոցելու համար բարեբարները վճարած են 125 անգլ. ոսկի. 467 ¼ սուր. ոսկի, բոլոր ծախքին երկու երրորդէն քիչ պակաս, ծննդաբնութենէ ու դարմանատունէ ունեցած ենք 185 սուրիական ոսկի բոլոր ծախքին հազիւ չեւ, նուիրատուութիւն

Պաշտօնէութեան	38105
Մննդեղէն	15714
Վառելանիւթ	6293
Ելեքտրական, եւ ջուր	1768
Դեղօրէից	5213
Ոյլեւայլք (գրնկ. տպգր. եւայլն)	6828
Կարասիք	565
Ավանս ելեքտր. Ընկերութեան	1250
	75736

Եղած է 39 ¼ սուր. ոսկի, պարտք մը թողուցած ենք 65 սուրի. սակայն մթերանոցը պատրաստ ունինք 33 սուրինոց ապրանք ու 1250 ելեքտր. ավանս, որով գրեթէ պարտք չէ մնացած:

Ուրախ ենք յայտարարելու որ հետզինետէ ժողովուրդին մէջ Մայրանոցի շուրջ հետաքրքրութիւնը ու վատահութիւնը կ'աւելնայ, չորս ու կէս ամսուայ 43 ծեռնդին փոխարէն Յունվարի մէջ ունեցած ենք քսան ծնունդ: Յունվարի ամբողջ

ծախսը եղած է 165 սուրի, որուն փոխարէն ծընդաբերութեան ու դարմանատան հասոյթը եղած է 112 սուր. ոսկի, այսինքն ամբողջ ծախսին 2/3ը գոցուած է հաստատութեան բնական հասոյթովը:

Այս հաստատութիւնը որպէսզի կանգուն կարենայ մնալ պէտք է ինքնաբաւ դառնայ: Ճիշդ է որ բարերարները չորս տարուայ համար տարեկան 250 անգլ. ոսկիով կը մասնակցին հաստատութեանս պիւտնէին, այն յուսով որ չորս տարի վերջ հաստատութիւնը այլևս ի վիճակի պիտի ըլլայ ինքինք կառավարելու իր հասոյթներովը: Անցնող չորս ու կէս ամսուայ շրջանին 757 սուր. ոսկի ծախս եղած է ու 43 ծնունդ, այսինքն իւրաքանչիւր ծնունդ տասնեւեօթ ու կէս սուրիական ոսկի արժեր է հաստատութեան վրայ, մինչ իւրաքանչիւր ծննդաբեր միջին հաշուով վճարեր է չորս սուրիական ոսկի իշխանութիւնինք որ յառաջիկայ տարի Յունուար ամսուայ վրայ յենլով ունենանք տարեկան 240 ծնունդ այսինքն ամիսը քսան ծնունդ ու տարեկան ծախսը ենթադրենք երկու հազար չորս հարիւր սուրիական ոսկի, իւրաքանչիւր ծնունդ հաստատութեանս պիտի արժէ տաս սուր. ոսկի:

Ահա այս կէտն է որ կ'ուզենք հանրութեան ու շաղրութեանը յանձնել: Միշտ դիմումներ կ'ըլլան ծրիօրէն ընդունուելու Մայրանոց, իբրեւ ազգ հաստատութիւն եւ կամ նոյնիսկ վճարողները կաշխատին կարելի եղածին չափ քիչ վճարումով ընդունուիլ. ասիկա մեր ազգային հիւանդութիւններէն մէկը եղած է, ամենէն աղքատն իսկ երբ ծննդաբերութիւնը տունը կատարէ նուազագոյն 5—6 սուրիականի ծախս մը կ'ունենայ, ինչու ամեն ոք գէթ իր տունը ընելիք ծախսը սիրայօժար չի տրամադրէ հաստատութեանս: Պէտք է ամեն ոք ըմբռնէ թէ այս հաստատութիւնը օրինութիւն մըն է ազգին համար, երեւեկայեցէք այն խղճալիք պայմանները, որոնց մէջ ծննդաբերութիւն կը կատարէ հայ մայրը, մաքրութիւն, թժշկական սպասարկութիւն, կատարելապէս կը պակսին, հապա գործին բարոյական կողմը, խեղճ մայրը շատ անգամներ պատիկներու հետաքրքրական ակնարկներուն տակ ստիպուած է իր երկունքը անցնելու: Ուստի, մեր ամենուն պարտականութիւնը պէտք է ըլլայ, յորդորել ժողովուրդը որ իր զաւակներուն ծնունդը վստահի Մայրանոցին, որ հետզհետէ դիմողներու թիւին շատնալուն հետ համեմատօրէն պիտի կարենայ

իր թերիները լրացնել ու ըլլալ արդիական լաւագոյն հաստատութիւն մը:

Ուրախ ենք որ Տիկնանց Օժանդակ Յանձնախումբը, որուն վստահուած է հաստատութեանս բրօբականտի հարցը, արդէն լծուած է իր աշխատութեան: Այս մասնախումբը կազմուած է.

Տիկնայք, Գանըպալեան, Աֆիֆէ
Զօրեան, Նազենի
Մակազեան, Արուսեակ
Տէր Ղեւոնդեան, Աղաւնի
Յահմէ, Թագուհի
Օրիօրդներ, Գաբրիէլեան, Արաքսի
Թընկըրեան, Արուսեակ :

Մասնախումբը բրօբականտի գործը յառաջ տանելով հանդերձ կը ջանայ ամսական կանոնաւոր վճարումներով ժողովուրդը կապել Մայրանոցիս:

Պարտք կ'զգանք հոս մեր խորին շնորհակալութիւնները մատուցանել Կիւլպէնկեան բարերարներուն, որոնք ոչ թէ միայն այս հոյակապ շէնքը կերտեցին, այլ եւ զայն օժտեցին արդիական Մայրանոցի մը ամեն կազմածներով, ու տակաւին կը շարունակեն իրենց հոգածութիւնը. վերջերս հաստատուած քալօրիֆէրը անոր ապա-

ցոյցն է: Բարերարներու ընծեռած տարեկան նպաստն է որ այս հաստատութիւնը այսօր կանգուն կը պահէ, ու վաղուան ապահովութեան կ'առաջնորդէ:

Այս առթիւ թոյլ տրուի մեզ մեր խորին շնորհակալութիւնները յայտնել բոլոր անոնց, որոնք սատարեցին այս հաստատութեան կազմակերպութեան, ի մասնաւորի Սրբազան Առաջնորդին, Ազգ. Վարչութեան, Քաղ. Ժողովին ու բոլոր պաշտօնական Մարմիններուն, Շիկնութեան յանձնաժողովին, Տիկնանց Օժանդակ Յանձնախումբին ու հաստատութեանս բոլոր պաշտօնէութեան:



ՏՊԱՐԱՆ

«ԱՐԱՐԱՏ»

ԽԱՆՏԻՏԻՔ

ՀԱԼԵՊ



«Ազգային գրադարան



NL0270320

3557

